— Օրհնութեան յանուն Բարեգործական ընկերութեանն Հայոց Եւրոպայոյ։ Թ. 912.

— Ցանուն Զաքարիայի Նազարբէգեանց ի նոյն միտս։ Թ. 913.

— Ցանուն Տ. Հայկանուշայ Ներսիսեանց Ագուլեցւոյ ի նոյն միտս, յաղագս նուիրաբերելոյ նորա ձեռն մի մեծագին զգեստուց վանուցն Ս. Թովմայ Առաքելոյ որ յԱգուլիս Թ. 870.

— Ցանուն Կուլտուրական միութեանն Հայոց Բագուայ ի նոյն միտս։ Թ. 901։

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈԴԻ

Ի 11-ն մայիսի Սինոդն հրամայեաց արձակել զՄարտիրոս Աւաք քահանայ ի պաշտամանէ կառավարչի Էջմիածնապատկան կալուածոց Ալեքսանդրապոլու ըստ խնդրանաց իւրոց և զկառավարութիւնն յանձն առնել հոգևոր Կառավարութեան տեղւոյն։ Պատուիրել հոգևոր Կառավարութեան վերաշինել զփլուզեալ կրպակն Մ. Աթոռոյ № 20, 21, ընդ առանձին հսկողութեամբ փոխանորդին Հ. 412.

Ի 15-ն մայիսի Սինոդն հրամայեաց թոյլ տալ Կոնստանտինոսիային Երևանայ ընդունել զԹաչատուրն Տ. Գալստեանց ի կոչումն հոգևոր և առաջադրել փոխ-թեմակալին Երևանայ ձեռնադրել զնա ի քահանայ Զռչի գեղջ վիճակին Կարուց։ Հ. 418.։

Ի 16-ն մայիսի Սինոդն հրամայեաց կարգել զԸնձակ վարդապետ քննիչ բողոքանաց ժողովրդական Էջմիլար գեղջ, որ վասն բողոքանաց զՄիմէոն քահանայ Թովմասեանէ և պահանջել ի հասարակութենէ գեղջն ռուբլիս քսան և հինգ ի ծախս քննիչին։ Հ. 423.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց ծանուցանել Կոնսիստորիային Ատրպատականի, եթէ ի դէպս կարգման Ծիսատեր քահանայից և տեղափոխութեանց նոցին պարտ է վարել ըստ մտաց շրջաբերական հրամանի Սինոդիս ,19 յունուարի 1905 ամի Հ. 426.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց հաստատել զեղբակացութիւն Կոնսիստորիային Երևանայ, որ վասն թոյլ տալոյ Յակովբ քահանայի Գիւլանթափ գեղջ տեղափոխել ի գիւղն Ջերմալի. Հ. 498.

Ի 18-ն մայիսի Սինոդն հաստատելով զեղբակացութիւն Կոնսիստորիային՝ տալ զՍիմէոն քահանայ Տ. Դանիէլեանց ի դատ մարմնաւոր իշխանութեան և հայցել զհաճութիւն Նորին Սրբութեան վաւերական ճանաչել զպսակ Միքայելի Իսրայելեանց ընդ Հեղինեայ Տ. Յարութիւնեանց. Հ. 433.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց պատուիրել Կոնսիստորիային Ղարաբաղի առաքել զՄկրտիչ քահանայ Տ. Յովհաննիսեանց ի մի ի վանորէից Թեմին յապաշխարութիւն եռամսեայ ժամանակաւ. իսկ վասն՝ վաւերական ճանաչելոյ զպսակ Արշակայ Առաքելեանց ընդ Վարսենկան Դասպարեանց հայցել զհաճութիւն Նորին Սրբութեան. Հ. 434.

Ի 23-ն մայիսի Սինոդն ունելով առաջի աչաց զարդիւնս քննութեան և զխոստովանութիւն յանցաւոր քահանայից, անդամոց և ատենադպրի Կոնսիստորիային Նոր Նախիջևանի և Բեսարաբիոյ, հրամայեաց նախ՝ զԲարսեղ ա. քահանայն Խազանճեանց, զՍարգիս քահանայն Թաթիզեանց և զԿարապետն Յովհաննիսեանց արձակել իսպառ ի պաշտամանց անդամութեան և ատենադպրի Կոնսիստորիային, արգելլով յայսմ՝ հետէ ունել պաշտամանս ի հոգևոր հաստատութիւնս Հայոց. երկրորդ՝ զԲարսեղն ա. քահանայն և զՍարգիս քահանայն առաքել ի վանս Ս. Խաչի Ղրիմու յապաշխարութիւն անորոշ ժամանակաւ, երրորդ՝

պահանջել ի քահանայիցն և ի Կարապետ Յովհաննէսեան ընդ փոյթ առաջի առնել զվատնեալ դրամս ի գումարս չորս հազար եօթն հարիւր քսան և հինգ ռուբլեաց և քսան և երկու կոպեկաց, զմի երրորդ մասն գումարի պահանջել յիւրաքանչիւրոյն. չորրորդ՝ վասն կատարման վճռոյս հանել հրաման Կոնսիստորիային Բեսարաբիոյ և տալ տեղեկութիւն վանահօր վանուցն ս. Խաչի Ղրիմու և ի հինգերորդ՝ վասն 10,000 ռուբլեաց, զորս ընկալեալ է Բարսղի ա. քահանայի ի քաղաքային դրամատանէ Քիշնևի, առնել զառանձինն զեկուցումն։ Հ. 452.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց թոյլ տալ Կոնսիստորիային Նոր-Նախիջևանի և Բեսարաբիոյ ընդունել զբնակիչն Թոփտի գեղջ զԳաբրիէլն Տ. Միքայելեանց և զՕհանն Տ. Գաբրիէլեան ի հոգևոր կոչումն և առաջադրել առաջնորդին թեմին ձեռնադրել զնա ի քահանայ ս. Փրկիչ եկեղեցւոյ գեղջն։ Հ. 455, 456.

Ի նմին թուի Սինոդն ի նկատի առեալ զարդիւնս ուսումնասիրութեան գործոյն Ռէյտելի՝ համարի ոչ յօգուտ Մ. Աթոռոյ յետս դնել զկապալառութիւն Ռէյտելի. ուստի թողու անփոփոխ և անխախտ զդաշնագիր զկռեալն ընդ Ռէյտելի յ7-ն դեկտ. 1901 ամի։

Ամուսնալուծութիւնք

Ի 18-ն մայիսի Սինոդն հաստատելով զեղրակացութիւն Կոնսիստորիային Ղարաբաղի՝ հրամայեաց լուծանել զպսակ Գասպարայ Գափեան ընդ կնոջն Նաշխունի Վանէսեան. առն և եթ տալով իրաւունս մտանել ի նոր ամուսնութիւն։ Հ. 429.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց լուծանել զպսակ Յովհաննիսի Ափինեան ընդ Սոնայի Սարգսեան Տ. Դաւթեանց՝ թոյլ տալ երկոցունց ևս մտանել ի նոր ամուսնութիւն զկնի միամեայ եկեղեցական ապաշխարութեան։ Հ. 431.

Ի նմին թուի հաստատելով զեղրակացութիւն Կոնսիստորիային Ղարաբաղի՝ լուծանել զպսակ Մովսիսի Յովհաննիսեան ընդ Գայիանեայ Գաբրիէլեանց, թոյլ տալով կնոջն մտանել ի նոր ամուսնութիւն. Թ. 432.

Ի 21-ն մայիսի Սինոդն հաստատելով զեղրակացութիւն Կոնսիստորիային Ղարաբաղի՝ լուծանել զպսակ Խուաթի Մկրտչեանց ընդ կնոջն Զառիի, թոյլ տալով առն մտանել ի նոր ամուսնութիւն. Հ. 439.

Ի 23-ն մայիսի Սինոդն հրամայեաց լուծանել զպսակ Ամանասի Ժամհարեանց ընդ կնոջն Աշխենի Ամանասեան՝ տալով առն մտանել ի նոր ամուսնութիւն, իսկ կնոջն՝ զկնի եռամսեայ եկեղեցական ապաշխարանաց մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում. Հ. 460.